

Արևելյան գործընկերության գագաթաժողովի համատեղ հայտարարություն

(Ռիգա, 21-22 մայիսի, 2015)

Հայաստանի Հանրապետության, Ադրբեջանի Հանրապետության, Բելառուսի, Վրաստանի հանրապետությունների, Մոլդովայի և Ուկրաինայի հանրապետությունների նախագահները կամ վարչապետները և ներկայացուցիչները, Եվրոպական միության ներկայացուցիչները և դրա անդամ երկրների նախագահները կամ վարչապետները և ներկայացուցիչները հանդիպել են Ռիգայում 2015 թվականի մայիսի 21-22-ը: Գագաթաժողովին ներկա էին նաև Եվրոպական խորհրդարանի նախագահը և Տարածաշրջանների հանձնաժողովի, Եվրոպական տնտեսական և սոցիալական հանձնաժողովի, Եվրոպական ներդրումային բանկի, Եվրոպական զարգացման և վերակառուցման բանկի, Արևելյան գործընկերության տարածաշրջանային և տեղական իշխանությունների համաժողովի, Եվրանեսթ Խորհրդարանական վեհաժողովի ներկայացուցիչները:

1. Ռիգայի գագաթաժողովի մասնակիցները վերահաստատում են այն մեծ կարևորությունը, որը նրանք տալիս են Արևելյան գործընկերությանը՝ որպես Եվրոպական հարևանության քաղաքականության հատուկ ձևաչափի: Նրանք վերահաստատում են իրենց միասնական տեսլականը ռազմավարական և հավակնոտ գործընկերության վերաբերյալ, որը հիմնված է փոխադարձ շահերի և պարտավորությունների վրա, և որը աջակցում է բարեփոխումների կայուն գործընթացին Արևելյան գործընկերության գործընկեր երկրներում, երկրներում, որոնք մասնակցում են Արևելյան գործընկերության ծրագրին: Գագաթաժողովի մասնակիցները վերահաստատում են իրենց հանձնառությունը՝ ամրապնդելու ժողովրդավարությունը, օրենքի գերակայությունը, մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, ինչպես նաև միջազգային իրավունքի նորմերը և սկզբունքները, որոնք եղել և մնում են այս Գործընկերության սրտում այն պահից ի վեր, երբ Եվրոպական միության անդամ պետությունները և Արևելյան Եվրոպայի իրենց գործընկերները սկսեցին այն՝ որպես համատեղ նախաձեռնություն: Նրանք հիշեցնում են, որ Արևելյան գործընկերությունը հիմնված է միասնական սեփականության, պատասխանատվության, տարբերակման և փոխադարձ պատասխանատվության վրա: Նրանք ընդգծում են ողջ հասարակության մասնակցության կարևորությունը միասնական այս տեսլականը իրականություն դարձնելու հարցում:

2. Եվրոպական հարևանության և Արևելյան գործընկերության շրջանակներում գազաթաժողովի մասնակիցները վերահաստատում են գործընկերներից յուրաքանչյուրի ինքնիշխան իրավունքը՝ ազատորեն ընտրելու հավակնությունների մակարդակը և նպատակները, որոնց նա ձգտում է ԵՄ-ի հետ հարաբերություններում: ԵՄ-ն և նրա ինքնիշխան գործընկերները պետք է որոշեն, թե ինչպես են ցանկանում շարունակել իրենց հարաբերությունները: Գազաթաժողովի մասնակիցները ընդգծում են, որ ժողովրդավարության ամրապնդումը և գործող շուկայական տնտեսության ստեղծումը, մակրոտնտեսական կայունության և բիզնես միջավայրի բարելավումը, ինչպես նաև փոխկապակցվածությունը, շարժունակությունը և մարդկային կապերի ընդլայնումը նոր հեռանկարներ են բացում համագործակցության համար՝ նպաստելով նաև առևտրին, աճին և մրցունակությանը: Սա ծառայում է միասնական հանձնառությանը՝ ուղղված կայունությանը, անվտանգությանը և բարգավաճմանը Եվրոպական միության, Արևելյան Եվրոպայի գործընկերների և մեր ողջ մայրցամաքում:

3. Ուկրաինայի դեմ գործողությունները և Վրաստանում 2014 թվականից ի վեր տեղի ունեցած դեպքերը ցույց տվեցին, որ ինքնիշխանության և միջազգայնորեն ճանաչված սահմաններում տարածքային ամբողջականության հիմնարար սկզբունքները 21-րդ դարում չեն կարող երաշխավորված համարվել Եվրոպական մայրցամաքում: ԵՄ-ն շարունակում է հավատարիմ մնալ իր բոլոր գործընկերների տարածքային ամբողջականությանը, անկախությանը և ինքնիշխանությանն աջակցելուն: ԵԱՀԿ անդամ բոլոր պետությունների կողմից 1975 թվականի Հելսինկյան եզրափակիչ ակտով, ԵԱՀԿ բոլոր մասնակից երկրների կողմից հաստատված 1990 թվականի Փարիզյան խարտիայով ամրագրված բոլոր սկզբունքներին և պարտավորություններին ամբողջականորեն հետևելը, ինչպես նաև ՄԱԿ-ի կանոնադրության սկզբունքներին և դրույթներին ամբողջական կերպով հարգելը հույժ կարևոր է միասնական, խաղաղ և ազատ Եվրոպայի մեր տեսլականի համար: Գազաթաժողովի մասնակիցները շեշտում են, որ Արևելյան գործընկերության նպատակն է կառուցել ժողովրդավարության, բարգավաճման, կայունության և աճող համագործակցության ընդհանուր տարածք, որն ուղղված չէ որևէ մեկի դեմ: Այս համատեքստում գազաթաժողովի մասնակիցները իրենց պատրաստակամությունն են հայտնում մեր մայրցամաքում վստահության վերակառուցման հարցում:

4. Գազաթաժողովի մասնակիցները մեծապես աջակցում են բոլոր ջանքերին՝ ուղղված իրավիճակի սրվածության նվազեցմանը և քաղաքական կարգավորմանը՝

հիմնված Ուկրաինայի անկախության, ինքնիշխանության և տարածքային ամբողջականության հարգման վրա: Նրանք կոչ են անում բոլոր կողմերին անհապաղ և ամբողջությամբ իրականացնել 2014 թվականի սեպտեմբերի Մինսկի համաձայնագրերը և դրանց իրականացման համար 2015 թվականի փետրվարի միջոցառումների փաթեթը, որին աջակցել է Պետության ղեկավարների և կառավարության քառակողմ հայտարարությունը, և որը հաստատվել է 2015 թվականի փետրվարի 17- ի ՄԱԿ-ի ԱԽ 2202 բանաձևով: Նրանք հույս ունեն, որ բոլոր կողմերը կկատարեն իրենց պարտավորությունները այս շրջանակում: Նրանք կոչ են անում անհապաղ ազատ արձակել բոլոր գերիներին և անօրինական ձերբակալված անձանց: Նրանք հայտնում են իրենց ողջ աջակցությունը ԵԱՀԿ-ին և Հատուկ դիտորդական առաքելության և եռակողմ կոնտակտային խմբի շրջանակներում նրա ջանքերին: Նրանք նաև շարունակելու են աջակցել Նորմանդական քառյակի շրջանակներում բոլոր դիվանագիտական ջանքերին և գնահատում են Բելառուսի ջանքերը բանակցություններին աջակցելու հարցում: Գազաթաժողովի մասնակիցները կոչ են անում բոլոր կողմերին լիովին համագործակցել միջազգային հետաքննության և քրեական դատավարության գործընթացների շրջանակներում պատասխանատվության ենթարկելու նրանց, ովքեր պատասխանատու են MH17-ի կործանման մեջ: ԵՄ-ն վերահաստատում է իր դիրքորոշումը, որը նա ստանձնել է ապրիլի 27-ին ԵՄ-Ուկրաինա գազաթաժողովի միացյալ հայտարարությամբ, այդ թվում նաև Ղրիմի և Սևաստոպոլի անօրինական բռնազավթման հարցում: Գազաթաժողովի մասնակիցները վերահաստատում են իրենց դիրքորոշումները Ուկրաինայի տարածքային ամբողջականության մասին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 68/262 բանաձևի վերաբերյալ :

5. Գազաթաժողովի մասնակիցները ընդգծում են տարածաշրջանում հակամարտությունների շուտափույթ խաղաղ կարգավորման անհրաժեշտությունը՝ հիմնված միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի վրա: Հակամարտությունների կարգավորումը, վստահության կառուցումը և բարիդրացիական հարաբերությունները կարևոր են տնտեսական և սոցիալական զարգացման և համագործակցության համար: Գազաթաժողովի մասնակիցները ողջունում են ԵՄ-ի ներդրումը կայունության ու վստահության հետագա կառուցման մեջ և ընդգծում են այս հարցում ԵՄ-ի մասնակցության ավելի ակտիվացման անհրաժեշտությունը: Նրանք ողջունում են ԵՄ-ի ակտիվ դերակատարումը՝ ուղղված հակամարտությունների կարգավորման և վստահության կառուցմանը՝ առկա համաձայնեցված ձևաչափերի և գործընթացների շրջանակում կամ ի աջակցություն դրանց՝ ներառյալ

անհրաժեշտության դեպքում տեղում ներկայացվածությունը: Նրանք ընդգծում են 5+2 ձևաչափով Մերձդնեստրյան հակամարտության համապարփակ խաղաղ կարգավորման շուրջ բանակցություններում առաջընթացի կարևորությունը և ողջունում են Քիշնևի և Տիրասպոլի միջև ցանկացած ձևաչափով երկխոսության ակտիվացումը: Նրանք հաստատում են իրենց ամբողջական աջակցությունը Լեոնային Ղարաբաղի հակամարտության հետ կապված Մինսկի խմբի համանախագահների միջնորդական ջանքերին՝ ներառյալ նախագահների մակարդակով և նրանց հայտարարությունները 2009 թվականից ի վեր: Հիմնվելով 2008 թվականի օգոստոսի 12-ի հրադարարի համաձայնագրի ամբողջական իրականացման անհրաժեշտության վրա՝ գազաթաժողովի մասնակիցները վերահաստատում են Վրաստանում հակամարտության կարգավորման ջանքերին իրենց հանձնառությունը, այդ թվում ԵՄ Հարավային Կովկասի և Վրաստանում ճգնաժամի հարցերով ԵՄ հատուկ ներկայացուցչի կողմից Ժնևյան միջազգային քննարկումների համանախագահության և Վրաստանում ԵՄ դիտորդական առաքելության ամբողջական իրականացման միջոցով: Մասնակիցները շեշտում են ԵԱՀԿ-ի՝ որպես ներառական կազմակերպության հատուկ դերը տարածաշրջանում հակամարտությունների կարգավորման մեջ: Գազաթաժողովի մասնակիցները նաև համաձայնել են ակտիվացնել ԵՄ և Արևելյան գործընկերության գործընկերների միջև համագործակցությունը միջազգային ֆորումներում:

6. Գազաթաժողովի մասնակիցները վերահաստատում են Արևելյան գործընկերության նպատակը՝ զարգացնելու ամուր, տարբերակված հարաբերություններ ԵՄ-ի և նրա վեց ինքնիշխան անկախ գործընկերների միջև: Համագործակցության շրջանակը և խորությունը որոշվում է ԵՄ-ի և գործընկերների հավակնություններն ու կարիքները, ինչպես նաև բարեփոխումների տեմպերը հաշվի առնելով:

7. Գազաթաժողովի մասնակիցները վերահաստատում են Արևելյան գործընկերության գազաթաժողովի հայտարարության մեջ ամրագրված տարրերը և սկզբունքները և ընդգծում են նախորդ գազաթաժողովների ժամանակ ու երկկողմ համաձայնագրերով ստանձնած պարտավորություններին խթանելու իրենց մտադրությունը: Գազաթաժողովի մասնակիցները ընդունում են, որ ժողովրդավարությունը, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունները հարգելը և օրենքի գերակայությունն ընկած են քաղաքական սառցացման և տնտեսական ինտեգրացիայի հիմքում, ինչպես նախատեսվում են Ասոցացման համաձայնագրով: Նրանք ճանաչում են գործընկերների հանձնառությունն այս արժեքների իրականացման

և խթանելու հարցում: Գազաթաժողովի մասնակիցները գիտակցում են հետաքրքրված գործընկերների եվրոպական ձգտումները և ընտրությունը, ինչպես ասվում է Ասոցացման համաձայնագրի մեջ:

8. Գազաթաժողովի մասնակիցները ընդգծում են, որ Արևելյան գործընկերությունը շարունակում է ծառայել որպես համագործակցության և երկխոսության ներառական շրջանակ՝ ուղղված երկարաժամկետ համապարփակ արդիականացման բարեփոխումներին: Նրանք շարունակում են հավատարիմ մնալ այս գործընկերության ողջ ներուժը ապահովելու հանձնառությանը՝ հիմնվելով մինչ օրս ունեցած ձեռքբերումների վրա: ԵՄ-ի և նրա գործընկերների միջև հարաբերությունների ամրապնդման վերաբերյալ գազաթաժողովի որոշումները նաև տեղեկացնելու են Եվրոպական հարևանության քաղաքականության շարունակվող վերանայման մասին: Գազաթաժողովի մասնակիցները խրախուսում են իրենց հասարակությունների բոլոր հատվածներին նպաստելու այս վերանայմանը:

9. Գազաթաժողովի մասնակիցները վերանայեցին և ողջունեցին Արևելյան գործընկերության կարևոր ձեռքբերումները 2013 թվականի Վիլնյուսի գազաթաժողովից ի վեր, մասնավորապես Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության և Ուկրաինայի հետ Ասոցացման համաձայնագրի ստորագրումը և նախնական կիրառումը, որը կարևոր քայլ է գործընկերների միջև քաղաքական ասոցացման և ԵՄ հետ տնտեսական ինտեգրացիայի արագացման համար: Գազաթաժողովի մասնակիցները շեշտում են, որ ԱՀ/ԽՀԱԱՀ իրականացումը պետք է լինի ԵՄ-ի և գործընկերների գործընկերների գլխավոր առաջնայնությունը առաջիկա տարիներին: Սա կայուն ժողովրդավարության և այս գործընկերների տնտեսությունների և հասարակությունների խոր արդիականացման միակ ուղին է, որի համար կոչ է արվում իրենց քաղաքացիներին: Գազաթաժողովի մասնակիցներն ակնկալում են, որ Խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու մասին համաձայնագրի նախնական իրականացումն Ուկրաինայի հետ, որը մեկնարկելու է 2016 թվականի հունվարի 1-ին, դրական ազդեցություն կունենա: ԵՄ-Ուկրինա ԽՀԱԱՀ իրականացման շուրջ եռակողմ խորհրդակցությունների կառուցողական ջանքերը, որ հիմնված են բանակցող կողմերի միջև առկա ճկունության վրա, բավական կարևոր են: Նրանք ողջունում են ԵՄ-ի անդամ պետությունների մեծ մասում վավերականացման գործընթացի ավարտը և կոչ են անում մնացած անդամ երկրներին հետևել նրանց օրինակին, որպեսզի շուտափույթ և ամբողջությամբ ուժի մեջ մտնեն այս համաձայնագրերը:

10. Գազաթաժողովի մասնակիցները ողջունում են Ասոցացման համաձայնագրերի կիրառման հաջողված մեկնարկը: Նրանք դրական են գնահատում առևտրի աճին ԵՄ-ի և Վրաստանի, ինչպես նաև ԵՄ-ի և Մոլդովայի Հանրապետության միջև՝ համապատասխանաբար խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու մասին պայմանագրի կիրառման պահից սկսած: Ասոցացման խորհուրդներն իրենց առաջին հանդիպումներն են անցկացրել, որպեսզի հսկեն այս համաձայնագրերի իրականացման գործընթացները: ԵՄ-ն ապահովել է և կշարունակի ԵՀՔ գործիքի միջոցով ապահովել նշանակալի աջակցություն և հատուկ ծրագրեր, այդ թվում ինստիտուտների ամրապնդման ու հանրային կառավարման բարեփոխումների ոլորտում՝ խրախուսելով բոլոր երեք գործընկերների բազմակողմանի բարեփոխումներ կատարելու կարողությունը, ինչն էական նշանակություն ունի ԱՀ/ԽՀԱԱՀ-ից առավելագույն օգուտներ ստանալու համար: ԽՀԱԱՀ Հարմարությունը փոքր և միջին ձեռնարկությունների համար, որը նոր միացյալ նախաձեռնություն է եվրոպական հանձնաժողովի և եվրոպական ներդրումային բանկի կողմից, կստեղծի նոր կարևոր ներդրումների հնարավորություն փոքր և միջին ձեռնարկություններին աջակցելու համար, որպեսզի վերջիններս լիովին օգտագործեն ԱՀ/ԽՀԱԱՀ-ի արդյունքում ստեղծվող նոր բիզնես հնարավորություններից: ԵՄ-ի նախաձեռնությունների վրա հիմնված («ավելին ավելիի դիմաց») մոտեցումից առավել կշահեն այն գործընկերները, ովքեր ավելի ներգրավված կլինեն բարեփոխումների մեջ: ԵՄ ֆինանսական աջակցությունն իր գործընկերներին պայմանավորված կլինի բարեփոխմանն ուղղված վերջիններիս կոնկրետ քայլերով:

11. Գազաթաժողովի մասնակիցները շեշտում են, որ բարեփոխումներով ուղեկցված ԱՀ/ԽՀԱԱՀ-ի իրականացումը կհանգեցնի ԵՄ օրենսդրության և չափանիշների համապարփակ մոտարկման՝ տանելով դեպի գործընկերների աստիճանական տնտեսական ինտեգրման ԵՄ ներքին շուկայում և դրանով իսկ տնտեսական տարածքի ստեղծման: Գազաթաժողովի մասնակիցները համաձայնում են, որ ԵՄ-ի և տվյալ գործընկերների միջև տնտեսական ինտեգրման նման հավակնոտ երկարաժամկետ տեսլականը ցանկալի է, քանի որ այն կնպաստի նաև տնտեսական բարեկեցության ավելի լայն գոտի ստեղծելու երկարաժամկետ նպատակի իրագործմանը՝ հիմնված ԱՀԿ կանոնների և Եվրոպայում ու դրանից դուրս ինքնիշխան ընտրության սկզբունքների վրա: Մասնակիցները կշարունակեն խրախուսել ԵՄ-ի, ԱլԳ երկրների և նրանց առևտրային գործընկերների միջև առևտուրը:

12. Գազաթաժողովի մասնակիցները ողջունում են այն քայլերը, որոնք արվել են 2013 թվականի Վիլնյուսի գազաթաժողովից սկսած՝ զարգացնելով ԵՄ-ի և իր յուրաքանչյուր գործընկերոջ միջև տարբերակված երկկողմ հարաբերությունները: Մասնակիցները ողջունում են համընդհանուր ըմբռնումը՝ ԵՄ-ի և Հայաստանի միջև ապագա համաձայնության հետ կապված, որի նպատակն է ապահովել նրանց փոխադարձ հետաքրքրության ոլորտների բազմակողմանի համագործակցության հետագա զարգացում ու ամրապնդում: Մասնակիցները ողջունում են նաև երկկողմ հետաքրքրությունների բոլոր ոլորտներում ԵՄ-Ադրբեջան հարաբերությունների պայմանագրային դաշտի ավելի ուժեղ հիմքերի ձևավորման հարցում գրանցված առաջընթացը: Մասնակիցները ողջունում են ԵՄ-Բելառուս հարաբերություններում արված քայլերը և ակնկալում են արդիականացման ժամանակավոր փուլի մեկնարկը, այդ թվում՝ որոշ հնարավոր նախագծեր, ինչպես նաև ԵՄ-Բելառուս մարդու իրավունքների շուրջ երկխոսության վերսկսումը:

13. Գազաթաժողովի մասնակիցները շեշտում են ԱլԳ երկրների բազմակողմ համագործակցությունը բոլոր մակարդակներով շարունակական խորացնելու կարևորությունը, ներառյալ՝ 4 բազմակողմ հարթակները, ինչպես նաև ողջունում են նախարարների հանդիպումները և բազմաոլորտ համաժողովների անցկացումը, այդ թվում՝ արդարադատության և ներքին գործերի, առևտրի, թվային տնտեսության, առողջապահություն և գյուղատնտեսության ոլորտներում՝ 2015 թ. առաջին կեսում: Նրանք նաև շարունակում են կարևորել գործընկերության ոչ պաշտոնական երկխոսությունների կարևորությունը, որոնք կբերեն ոչ ֆորմալ քննարկումների արտգործնախարարների միջև, ինչպես նաև համագործակցության նոր ոլորտներում ոչ ֆորմալ ուսումնասիրությունների: Այս համատեքստում նրանք ակնկալում են, որ հաջորդ երկխոսությունը տեղի կունենա հունիսին Մինսկում, ինչպես նաև շրջակա միջավայրի ոլորտում համագործակցության հետագա զարգացումը, որը շարունակում է ԱլԳ շրջանակներում մնալ կարևոր բնագավառ: Գենդերային հավասարությունն իր հերթին խոստումնալից նոր ոլորտ է հետագա համագործակցության համար:

14. Գազաթաժողովի մասնակիցները նշում են այն առաջընթացը, որ տեղի է ունենում ԱլԳ առաջնային նախաձեռնություններում, մասնավորապես սահմանների համալիր կառավարման, փոքր և միջին ձեռնարկությունների, էներգետիկ հարցերի,

շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության, բնական ու մարդածին աղետների ոլորտներում: Այս նախաձեռնությունները ցույց են տալիս այն շոշափելի օգուտները քաղաքացիներին, որ ԱլԳ-ն ներմուծել է իր արդյունավետ, գործնական ծրագրերի միջոցով: Մասնակիցները ողջունում են քաղաքային կայուն զարգացման վերաբերյալ նոր առաջատար նախաձեռնության մեկնարկը և անհամբեր սպասում են դրա իրականացմանը: Այս համատեքստում նրանք ընդգծում են Արևելյան Եվրոպայի էներգետիկ արդյունավետության և շրջակա միջավայրի շուրջ համագործակցության դերը, ինչպես նաև դրանում Հայաստանի, Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության և Ուկրաինայի ներգրավվումը:

15. Ընդունելով Արևելյան գործընկերության բազմակողմ համագործակցության կարևորությունը՝ գազաթաժողովի մասնակիցները շեշտում են տարբեր տարածաշրջանային նախաձեռնությունների և ցանցերի միջև կապվի ապահովման կարևորությունը: Նրանք հիշեցնում են, որ ԱլԳ-ն կարող է օգնել իր գործընկերների միջև առավել ամուր կապեր զարգացնելու հարցում:

16. Գազաթաժողովի մասնակիցները ողջունում են Արևելյան գործընկերության Տեսանելիություն ռազմավարության իրականացումը և համաձայնում են, որ անհրաժեշտ է ամրապնդել ռազմավարական հաղորդակցմանն ուղղված ջանքերը, այդ թվում այն փոխանակումներն ու գործողությունները, որոնք ներառում են ԵՄ-ն, դրա անդամ պետությունները և շահագրգիռ արևելաեվրոպական գործընկերներին՝ ԱլԳ համագործակցության ընդհանուր արժեքների և շահերի հիման վրա: Նրանք ընդգծում են այն կարևոր դերը, որ ԶԼՄ-ներն ունեն ժողովրդավարական հասարակության մեջ, և ողջունում են մայիսի 20-ին Ռիգայում տեղի ունեցած մեղիա համաժողովի արդյունքները՝ հաստատելով իրենց շարունակական աջակցությունը մամուլի ազատության հարցում:

17. Գազաթաժողովի մասնակիցները հաստատեցին իրենց նպատակը՝ հասնելու հավակնոտ և գլոբալ կլիմայի փոփոխության համաձայնագրին՝ ստորագրված դեկտեմբերին Փարիզում Cop21-ի կողմից, որպեսզի համաշխարհային տաքացումը պահպանեն 2 աստիճանի սահմաններում: Այս առիթով նրանք ողջունում են ԵՄ-ի կողմից կատարված ներդրումը, ինչպես նաև գործընկերների մտադրությունը՝ հնարավորինս արագ կատարելու իրենց ներդրումը, և կոչ են անում բոլոր մյուսներին հետևել օրինակին:

18. Արևելյան գործընկերության նպատակների իրագործման շրջանակներում կարևոր նշանակություն կունենա Եվրոպական հարևանության գործիքի (ENI) ամբողջական օգտագործումը համապատասխան դեպքերում՝ ներառյալ, միջսահմանային և տարածքային համագործակցության ծրագրերում: Ավելին՝ Գազաթաժողովի մասնակիցները շեշտադրում են Եվրոպական հարևանության ներդրումային Գործիքի կարևորությունը՝ դյուրացնելու համար վարկերի տրամադրումը Եվրոպական ֆինանսական կառույցների կողմից, մասնավորապես՝ բարելավելու համար փոխգործակցությունները և շուկայի հասանելիությունը: Գազաթաժողովի մասնակիցները շեշտադրում են ԵՄ ծրագրերին Արևելյան Եվրոպական գործընկերների մասնակցության հետագա զարգացման կարևորությունը և նրանց համագործակցությունը ԵՄ գործակալությունների հետ: Գազաթաժողովի մասնակիցները կոչ են անում մինչև հաջորդ Գազաթաժողովը առաջընթաց ապահովել հետևյալ չորս ոլորտներում:

Կառույցների ամրապնդում և լավ կառավարում

19. Գազաթաժողովի մասնակիցները վերահաստատեցին, որ անկախության ամրապնդումը արդարադատության, կոռուպցիայի արդյունավետ կանխման և դրա դեմ պայքարի ոլորտներում, ինչպես նաև հանրային կառավարման բարեփոխումները իրականացումը խիստ կարևոր են լավ կառավարման, քաղաքացիների մեջ վստահության ձևավորման և ԵՄ-ի ու նրա գործընկերների միջև հարաբերությունների ամրապնդման համար: Օրենքի գերակայության բարելավումը և իրավական որոշակիությունը հնարավորություն կտան գործընկերներին ավելի լավ հանրային ծառայություններ մատուցել, գրավել ներդրումներ և արդյունքում բարեկարգել քաղաքացիների կենսամակարդակը: ԵՄ-ն և նրա Արևելյան Եվրոպական գործընկերները կշարունակեն համագործակցությունը նշված ոլորտներում ԵՄ-ի աջակցությամբ:

20. Գազաթաժողովի մասնակիցները համաձայնեցին, որ կարևոր է ամրապնդել Արևելյան Եվրոպական գործընկերության տոկոսնությունը, որով նրանք դիմակայում են իրենց կայունության նոր մարտահրավերներին: Նրանք սատարում են ժողովրդավարական կառույցների ամրապնդմանը, հատկապես պետականաշինության,

քաղաքացիական անվտանգության բարեփոխումների և կիրքերանվտանգության ոլորտներում ընդլայնված համագործակցության միջոցով, որտեղ դա հնարավոր է, և խթանում են ջանքերը՝ ուղղված մոտ ապագայում այս ոլորտներում կարևոր ծրագրերի առանձնացմանը: Քաղաքացիների պաշտպանության և աղետների կառավարման ավելի լավ կանոնակարգված համագործակցության շրջանակը՝ հիմնված ընդհանուր նպատակների վրա, կօգնի արձագանքել արտակարգ իրավիճակների ապակայունացնող ազդեցությանը և ճգնաժամերին, ինչպես նաև ամրապնդել հասարակության ճկունությանը:

21. Գազաթաժողովի մասնակիցները ողջունում են ԵՄ-ի կողմից տրամադրված զանազան աջակցությունը Ուկրաինայում կառույցների ամրապնդման համար՝ Մակրո-ֆինանսական աջակցությունը Ուկրաինայի իշխանությունների և ԵՄ-ի միջև ձեռք բերված պայմաններով և կապված ԱՄՀ-ի ծրագրի երկարատև իրագործման հետ, ինքնավար շուկայի պրեֆերենցիաների ընդլայնումը, զարգացման գրանտները՝ ուղղված պետականաշինությանը և տնտեսության կայունացմանը աջակցելուն, մարդասիրական օգնությունը, փորձագիտական խորհրդատվությունը կառավարման բոլոր ոլորտներում, որն իրականացվում է հատուկ ստեղծված Ուկրաինային Աջակցության խմբի կողմից, ինչպես նաև Խորհրդատվական առաքելության (EUAM) ձևավորմամբ՝ կոչված խորհրդատվություն տրամադրել քաղաքացիական անվտանգության ոլորտում բարեփոխումների համար: Գազաթաժողովի մասնակիցները ողջունում են Ուկրաինայի և ԵՄ-ի միջև՝ Փոխըմբռնման հուշագրի և Վարկային համաձայնագրի ստորագրումը՝ վերաբերող 1.8 միլիարդ եվրոչափով Մակրո-ֆինանսական աջակցության ծրագրին: Նրանք ողջունում են ԵՄ-ի տրամադրած շոշափելի ֆինանսական և տեխնիկական աջակցությունը և քաղաքական խորհրդատվությունը՝ ուղղված Մոլդովայի Հանրապետությունում և Վրաստանում տնտեսական և կառուցվածքային բարեփոխումների կատարմանը աջակցելուն: Նրանք նաև ողջունել են Արևելյան Եվրոպական գործընկերների նմանատիպ աջակցությունը: Նրանք ողջունել են Վրաստանին տրամադրված աջակցությունը Մակրո-տնտեսական աջակցության ընթացող ծրագրի միջոցով: Ինչպես նաև նրանք ողջունելի են համարել Սահմանային աջակցության առաքելության (EUBAM) արժեքավոր ներդրումը սահմանային համագործակցության զարգացմանը Մոլդովայի Հանրապետության և Ուկրաինայի միջև, և սպասում են դրա շարունակությանը:

22. Գազաթաժողովի մասնակիցները համաձայնել են հնարավորության դեպքում շարունակել ամրապնդել բազմակողմ և երկկողմ անվտանգության երկխոսությունները և գործնական CSDP համագործակցությունը՝ ներառյալ հնարավորություն տալով շահագրգիռ գործընկերներին մասնակցել CSDP-ի գործողություններին, առաքելություններին և օպերացիաներին՝ ընդլայնելով նրանց կարողությունները այս հարցում: Նրանք գովաբանեցին Վրաստանում Մասնակցության շրջանակային համաձայնագրի արագ ուժի մեջ մտնելը: Նրանք ողջունեցին Ուկրաինայի ներդրումը ԵՄ-ի գլխավորությամբ Ռազմածովային օպերացիային (EUNAVFOR Atalanta), Վրաստանի ներդրումը ԵՄ Ռազմական օպերացիային Կենտրոնական Աֆրիկայի Հանրապետությունում (EUFOR RCA) և Մոլդովայի Հանրապետության ներդրումը ԵՄ Ուսուցողական առաքելությունը Մալիում (EUTM Mali), ինչպես նաև Վրաստանի և Մոլդովայի Հանրապետության պարտականությունը՝ ներդրում ունենալու ԵՄ Ռազմական խորհրդատվական առաքելությանը Կենտրոնական Աֆրիկայի Հանրապետությունում (EUFOR RCA) և Վրաստանի՝ EUTM-ին Մալի-ում: Նրանք նաև խրախուսեցին Ուկրաինայի ներդրումը EU Battlegroup-ին 2014թ.-ին և նրա հետաքրքրվածությունը՝ շարունակելու նման ներդրումը: Նրանք նաև ընդունում են այն կարևոր դերը, որ EU CSDP-ին խաղացել է Արևելյան Եվրոպական գործընկերների մոտ՝ ողջունելով Վրաստանում Մոնիթորինգային առաքելությունը ևս երկու տարով երկարաձգելը և Ուկրաինայում Խորհրդատվական առաքելության ծավալումը:

Շարժունակություն և միջանձնային կապեր

23. Գազաթաժողովի մասնակիցները վերահաստատում են, որ քաղաքացիների ընդլայնված շարժունակությունը ապահով և լավ կառավարվող միջավայրում մնում է Արևելյան գործընկերության հիմնական նպատակը: Սա կնպաստի ավելի հեշտ և ավելի հաճախ տեղաշարժին, գործնական և միջանձնային կապերին: Նրանք ողջունում են այն փաստը, որ 2014 թվականի ապրիլից գործող առանց վիզա ռեժիմը Մոլդովայի այն քաղաքացիների համար, ովքեր ունեն կենսաչափական անձնագիր, արդյունավետ է գործել՝ դյուրացնելով տեղաշարժը, գործնական և միջանձնային կապերը: Նրանք ջերմորեն ողջունում են համապատասխանաբար Մոլդովայի և Ուկրաինայի կողմից գրանցած առաջընթացը Վիզայի ազատականացման գործողության ծրագրերի իրականացման հարցում, ինչպես նկարագրված է Եվրոպական հանձնաժողովի

առաջընթացի վերաբերյալ զեկույցում: Նրանք ակնկալում են Մոլդովայի և Ուկրաինայի կողմից իրենց Վիզայի ազատականացման գործողության ծրագրերի երկրորդ փուլի իրականացմանը այն բանից հետո, երբ պահանջվող բարեփոխումների իրականացման միջոցով բոլոր նշաձողերը կհաղթահարվեն: Միննույն ժամանակ աջակցում են Հանձնաժողովի պատրաստակամությանը՝ անել ամեն ինչ՝ աջակցելու Ուկրաինային և Վրաստանին իրականացնելու իրենց ՎԱԳԾ-երը և Հանձնաժողովի մտադրությունը՝ արձանագրելու համապատասխանաբար Ուկրաինայի և Վրաստանի կողմից գրանցված առաջընթացը մինչև 2015 թվականի վերջ: Բոլոր նշաձողերի հաղթահարումը թույլ կտա ավարտին հասցնել ՎԱԳԾ գործընթացը, ինչպես նաև հնարավորություն կտա հանձնաժողովին առաջարկել Եվրոպական խորհրդարանին և խորհրդին ազատել համապատասխանաբար Ուկրաինայի և Վրաստանի քաղաքացիներին վիզայի պահանջներից՝ 539/2001 կանոնակարգի չափանիշի համաձայն:

Նրանք ողջունում են առ այսօր համապատասխանաբար Հայաստանի և Ադրբեջանի կողմից Վիզաների դյուրացման և ռեադմիսիայի համաձայնագրերի իրականացման հարցում գրանցած հաջողությունը: Նրանք ակնկալում են ապագայում՝ պատշաճ ժամանակ, Հայաստանի հետ քննարկել վիզայի վերաբերյալ երկխոսության մեկնարկը, այն դեպքում, եթե Հայաստանը շարունակի ապահովել կայուն առաջընթաց Վիզաների դյուրացման և ռեադմիսիայի համաձայնագրի իրականացման հարցում: Նրանք ողջունում են Վիզաների դյուրացման և ռեադմիսիայի համաձայնագրերի վերաբերյալ Բելառուսի հետ քննարկումներում ձեռք բերված արդյունքը, ինչպես նաև այն, ինչ ձեռք է բերվել ԵՄ-Բելառուս շարժունակության համագործակցություն ստեղծելու ուղղությամբ: Գազաթաժողովի մասնակիցները շեշտում են համապատասխան Գործընկերությունների ստորագրող կողմերի Շարժունակության գործընկերության գործիքի արդյունավետ և ամբողջական կիրառման կարևորությունը՝ կառուցելով առ այսօր գրանցված հաջող փորձի վրա: Նրանք նույնպես ողջունում են 2015 թվականի 29-ին Ռիգայում տեղի ունեցած Արևելյան գործընկերության երկրների Արդարադատության և ներքին գործերի նախարարների հանդիպման արդյունքները:

24. Գազաթաժողովի մասնակիցներն ընդգծում են մարդկանց միջև կրթական, երիտասարդական և մշակութային ոլորտներում շփումների կարևորությունը, որով նրանք նպաստում են Արևելյան գործընկերության նպատակների իրականացմանը: Նրանք ողջունում են «Էրասմուս+» առաջին կանչի մեկնարկը 2014-ին, որն ամբողջովին բաց է Արևելյան Եվրոպայի գործընկերների ուսանողների, երիտասարդների և

համալսարանների համար և որը համագործակցության և շարժունակության ընդլայնված հնարավորություն է ընձեռում: Գազաթաժողովի մասնակիցները ողջունում են Բելառուսի մուտքը Բարձրագույն կրթության եվրոպական տարածք և առաջիկայում ակնկալում են Բոլոնիայի գործընթացի պահանջներին բավարարելու համար անհրաժեշտ նրա բարձրագույն ուսումնական համակարգի բարեփոխումների ճանապարհային քարտեզի իրականացման առաջընթացի վերաբերյալ զեկույցին: Գազաթաժողովի մասնակիցները ողջունում են Մոլդովայի Հանրապետության և Ուկրաինայի ներգրավումը «Հորիզոն 2020» հետազոտությունների և նորարարության ծրագրի շրջանակում և առաջիկայում ակնկալում են Հայաստանի և Վրաստանի ներգրավման համաձայնագրերի վերջնականացումը: Նրանք հաշվի են առնում ԱլԳ 2-րդ Երիտասարդական համաժողովի արդյունքները, որը տեղի է ունեցել Փետրվարի 10-11-ը Ռիգայում, և որի թիրախում են եղել երիտասարդների զբաղվածությունը, երիտասարդների շրջանում միջոլորտային համագործակցությունը: Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության և Ուկրաինայի մասնակիցները «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրի շրջանակներում, ինչպես և այս տարի ավելի վաղ մեկնարկած ԱլԳ Մշակութային ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում կշարունակեն ամրապնդել մշակութային համագործակցությունն ԱլԳ ներքո: Գազաթաժողովի մասնակիցները նաև նկատի են առնում Ադրբեջանի կողմից ԵՄ ծրագրերին Ադրբեջանի մասնակցության մասին շրջանակային համաձայնագրի արձանագրության ստորագրումն ու վավերացումը և ակնկալում են, որ այն վերջնականապես ուժի մեջ կմտնի ԵՄ ներքին ընթացակարգերի ավարտից հետո: Գազաթաժողովի մասնակիցները սպասում են նաև Եվրոպական առաջին խաղերին, որոնք Ադրբեջանի կողմից կհյուրընկալվեն հունիսին:

25. Գազաթաժողովի մասնակիցները վերահաստատում են Արևելյան գործընկերության շրջանակներում առավել լայն հասարակության դերի կարևորումն իրենց կողմից: Նրանք հաշվի են առնում մայիսի 20-21-ը Ռիգայում տեղի ունեցած Քաղաքացիական հասարակության խորհրդաժողովի արդյունքները: Գազաթաժողովը խրախուսում է միջխորհրդարանական առավել սերտ համագործակցությունը, Եվրոպական խորհրդարանական վեհաժողովի շրջանակներում երկխոսությունն ու փոխանակումների խրախուսումը: Գազաթաժողովի մասնակիցները նաև ողջունում են Արևելյան գործընկերության Տեղական և տարածաշրջանային իշխանությունների խորհրդաժողովի կողմից ձեռնարկվելիք առաջիկա քայլերը: Նրանք Եվրոպական հանձնաժողովին հրավիրում են պատշաճ, թիրախային աջակցություն երաշխավորել տեղական ու տարածաշրջանային իշխանություններին՝ աջակցելու Արևելյան

գործընկերության նպատակների ու խնդիրների իրականացման գործում նրանց դերակատարությանը:

Շուկայական հնարավորություններ

26. Գազաթաժողովի մասնակիցները ողջունում են Արևելյան գործընկերության շրջանակներում գործարարությունն ու ձեռներեցությունը խրախուսելու առումով առավել սերտ համագործակցությունը: Նրանք համաձայն են Արևելյան գործընկերության բիզնես հարթության հետագա ամրապնդման հետ, ինչը ներառում է տեղական, տարածաշրջանային ու եվրոպական ՓՄՁ-ներն ու բիզնեսները խրախուսելու նպատակով Արևելյան Եվրոպայի գործընկեր երկրներում բիզնես միջավայրի ու իրավական չափորոշիչների կատարելագործումը: Նրանք հաշվի են առնում Ռիգայում մայիսի 21-ին Գազաթաժողովի հետ տեղի ունեցած Բիզնես համաժողովի խորհուրդները և ողջունում են Արևելյան Եվրոպայի գործընկեր երկրներում Փոքր և միջին ձեռներեցության զարգացումը խրախուսող ԵՄ համագործակցության ծրագրերը: Բոլոր երեք ԱՀ/ԽՀԱԱՀ գործընկերների համար ԵՄ-ն նոր նախաձեռնություն է գործարկել՝ ԽՀԱԱՀ Միջոցառումները՝ խրախուսելու ԱՀ/ԽՀԱԱՀ-ից ՓՄՁ-ների օգտվելու հնարավորությունները: Նրանք ողջունում են Մոլդովայի Հանրապետության մասնակցությունը ԵՄ-ի Ձեռնարկատիրությունների և Մանր ու միջին ձեռնարկատիրությունների մրցունակության ծրագրին և առաջիկայում ակնկալում են, որ Ուկրաինան ու Հայաստանը ևս կմիանան: Գազաթաժողովի մասնակիցներն առաջիկայում ակնկալում են, որ Մոլդովայի Հանրապետությունն անկասկած կմիանա Ծագման պան-եվրոպական-միջերկրածովյան արտոնյալ կանոնների մասին տարածաշրջանային կոնվենցիային, իսկ հետագայում ակնկալում են նաև Վրաստանի միացումը: Գազաթաժողովի մասնակիցները շեշտում են ապրանքների տարանցման արդյունավետ համակարգի գործունեությունն ապահովելու կարևորությունը: Այս համատեքստում նրանք խրախուսում են Արտոնված տնտեսական օպերատորի համակարգի ներդրումը: Նրանք նաև շեշտում են համագործակցության ու կանոնավոր համապատասխանեցման կարևորությունը, որտեղ անհրաժեշտ է՝ գյուղատնտեսության

և գյուղական շրջանների զարգացման նպատակով՝ այս ոլորտում ԽՀԱԱՀ ներքո հասու առևտրային հնարավորությունների կիրառմամբ:

27. Գազաթաժողովի մասնակիցները կարծում են, որ թվային տնտեսությունները դեռևս այն ոլորտն են, որտեղ և՛ ԵՄ-ն, և՛ գործընկերները դեռևս չեն իրացրել իրենց ներուժը: Նրանք ողջունել են E@P.CONNECT –ի մեկնարկը, որն Արևելյան Եվրոպայի հետազոտական և ակադեմիական հանրույթը կապում է համաեվրոպական հետազոտական և կրթական GEANT ցանցին:

Նրանք նաև ողջունել են EaPeReg-ի հաստատումը, որն էլեկտրոնային հաղորդակցության չափորոշիչների ԱլԳ ցանցն է, ինչպես նաև ԱլԳ երկրների թվային շուկաների ներդաշնակեցման վերաբերյալ ուսումնասիրության ավարտը: Նրանք սպասում են հաջորդ ամիս թվային տնտեսությունների վերաբերյալ ԱլԳ երկրների նախարարների հանդիպմանը, ինչպես նաև այս տարվա երկրորդ կեսին Թվային տնտեսությունների ներդաշնակեցման պանել, որը ստեղծվում է Բելառուսի նախաձեռնությամբ և ԵՄ որոշ անդամ երկրների աջակցությամբ:

Հանգույցներ

28. Գազաթաժողովի մասնակիցները հաստատում են իրենց միասնական շահագրգռվածությունը՝ ամրապնդելու էներգետիկ անվտանգությունը, կայունությունն ու մրցունակությունը և ընդլայնելու մատակարարման դիվերսիֆիկացիան: Նրանք հաստատում են էներգետիկ ոլորտում հետագա երկկողմ և բազմակողմ համագործակցությունը խորացնելու իրենց մտադրությունը: Մասնակիցները շեշտում են լավ աշխատող էներգետիկ շուկաների անհրաժեշտությունը, որոնք կունենան կայուն, թափանցիկ և ներդրողների հանդեպ բարյացակամ կարգավորման շրջանակ, օրենքի գերակայություն և շուկայի աստիճանական ազատականացում, հնարավորության դեպքում նաև կապահովեն ներդրումների հիմքի տրամադրումը: Նրանք կնպաստեն էներգետիկ անվտանգության, տեղաշարժի և մատակարարման շուրջ ներառական և բաց քաղաքականությանը: Նրանք ընդգծում են այն ավանդը, որ էներգետիկ արդյունավետությունն ու վերականգնվող էներգիան կարող են ունենալ մատակարարման անվտանգության և գործնական համագործակցության հարցերում ԵՄ-ի և արևելյան գործընկերների միջև: Նրանք գիտակցում են մեծ էներգետիկ ենթակառուցվածքային ծրագրերի ուղղությամբ գրանցված առաջընթացը և նախորդ

գազաթաժողովից հետո տեղադրված փոխկապակցման սարքավորումները, այդ թվում Հունգարիայից, Լեհաստանից և Սլովակիայից բնական գազի դեպի Ուկրաինա հոսքի ապահովումը, Ադրբեջանի խաղացած յուրահատուկ դերը, ինչպես նաև մյուսների՝ ներառյալ Վրաստանի կողմից աջակցությունը Հարավային գազային միջանցքի և Հարավային Կովկասի գազատարի ընդլայնման ընթացիկ աշխատանքի իրականացման և Տրանս-Անատոլիական և Տրանս-Ադրիատիկ, Յասի-Ունդենի գազի հանգույցի հանդիսավոր բացումը, ինչպես նաև Ռումինիայի և Մոլդովայի միջև կառուցվող Յասեկա-Վուլկանեստի էլեկտրաէներգիայի հանգույցի նախնական աշխատանքների իրականացումը: Մասնակիցները հաստատում են ռազմավարական ենթակառուցվածքների զարգացումը դյուրացնելու իրենց հանձնառությունը՝ շեշտադրելով արդյունքը, Հարավային գազային միջանցքի հետ դրա հարաբերակցությունը: Գազաթաժողովի մասնակիցները նաև խրախուսում և աջակցում են ինչպես ԵՄ-ում, այնպես էլ ԵՄ-ի և արևելյան գործընկերների միջև գազային և էլեկտրաէներգետիկ հանգույցների շարունակականությունը, ներառյալ ստանդարտ Փոխանցումային համակարգի օպերատորների միջև Հանգուցային համաձայնագրերի միջոցով: Մասնակիցներն ակնկալում են գազի փոխադրման ուկրաինական համակարգի արդիականացման համար ԵՄ-ի աջակցությունը՝ որպես Եվրոպական ցանցային համակարգի առանցքային հատված: Մասնակիցները նշում են Ուկրաինայի և Մոլդովայի կողմից էներգետիկ ոլորտում գրանցած առաջընթացը՝ համապատասխան Էներգետիկ համայնքի ներքո ԵՄ Էներգետիկ շուկայի օրենսդրությանը, և նշում են այս ոլորտում հետագա աշխատանքի և կիրառման կարևորությունը: Նրանք ընդգծում են Ռուսաստանի և Ուկրաինայի միջև գազային բանակցություններում ԵՄ-ի շարունակական դերը, որը կնպաստի կայուն, բավարար և անխափան գազի հոսքին Եվրոպա և Էներգետիկ հնարավորությունների ծրագրի մշակման աշխատանքին: Գազաթաժողովի մասնակիցները ողջունում են Էներգետիկ միության նպատակը՝ ԵՄ-ի և Էներգետիկ համայնքի շուկաների ավելի սերտ ինտեգրման հետ կապված: Նրանք նաև ողջունում են Էներգետիկ միությանը միանալու բանակցություններում Վրաստանի ունեցած առաջընթացը: Նրանք ողջունում են Կենտրոնական և Հարավարևելյան գազային հանգույցի խմբի աշխատանքը և Ադրբեջանի հետաքրքրությունը, այս խմբում որպես դիտորդ հանդես գալու նրա ցանկությունը: Նրանք ողջունում են Վադ կանխագրու շացման մեխանիզմի վերաբերյալ Եվրոպական հանձնաժողովի և Բելառուսի միջև Համագործակցության պայմանավորվածության ձեռքբերումը:

29. Տրանսպորտի բնագավառում գազաթաժողովի մասնակիցները ընդգծում են ԵՄ-ի և Արևելյան գործընկերների միջև տրանսպորտային կապերն ավելի անվտանգ ու արդյունավետ դարձնելու և կազմակերպչական համակարգերի բարելավման կարևորությունը՝ ներառյալ ծովային ուղիները և խթանելով երկաթուղային միջանցքների միջև համագործակցությունը: Մասնակիցներն ակնկալում են առաջնային համարվող ծրագրերի թարմացման և դասակարգման ուղղությամբ հետագա աշխատանք, ինչպես նաև մինչ հաջորդ գազաթաժողովը ԱլԳ տրանսպորտային ցանցում ենթակառուցվածքային նեղ անցքերի վերացում ԵՄ-ի և արևելյան գործընկերների միջև՝ հետագա ներդրումների և բարելավված սահմանային տրանսպորտային համագործակցության շնորհիվ: Նրանք առավելապես կարևորում են TEN-T տրանսպորտային մոդելը: Մասնակիցները նաև ողջունում են Արևելյան գործընկերության ցամաքային ջրագծերի ուղղությամբ ընթացիկ աշխատանքը և ակնկալում են դրա ներառումը ԱլԳ տրանսպորտային ցանցում: Նրանք ընդգծում են ԵՄ-Ուկրաինա Ավիացիոն համաձայնագիրն ավարտելու կարևորությունը 2015թ.-ին հնարավորինս վաղ ժամկետում, ինչպես նշված է Ասոցացման համաձայնագրում: Նրանք ակնկալում են ԵՄ-Հայաստան Ավիացիոն համաձայնագրի շուրջ բանակցությունների մեկնարկը առաջին իսկ հնարավորության դեպքում: Նրանք ողջունում են ԵՄ-Ադրբեջան Ավիացիոն համաձայնագրի շուրջ բանակցությունների վերամեկնարկը: Նրանք նաև ողջունում են ԵՄ-Մոլդովա և ԵՄ-Վրաստան Ավիացիոն համաձայնագրերի կիրառումը:

30. Գազաթաժողովի մասնակիցները ակնկալում են հաջորդ գազաթաժողովի անցկացումը 2017թ.-ին, որը կգնահատի արձանագրած արդյունքները և կընդգծի Գործընկերության առաջընթացը: